ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» նոյեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՊՐԱԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Պրագայի փողոցի հ.15 հասցեում գտնվող բնակելի տունը՝ 194,7քմ, օժանդակ տարածքները՝ 13,9քմ և 9,0քմ, պարիսպը՝ 1.0քմ և 1,4խմ և դրանց զբաղեցրած 298,81քմ մակերեսով հողամասը, որից 66,4քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման տարածք՝ Պրագայի փողոցի հ.15/2 հասցեում գտնվող բնակելի տան սեփականատեր Ռուզաննա Մանուկյանի և հարակից՝ թվով երկու բնակելի տների օգտագործողներ՝ Լաուրա Խաչատրյանի և Լևոն Ղազարյանի հետ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.10.2013թ. հ.10102013-01-0163 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գևորգ Հարությունի Մելքոնյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՊՐԱԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գևորգ Հարությունի Մելքոնյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Պրագայի փողոցի հ.15 հասցեում գտնվող 194.7քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 13.9քմ և 9.0քմ մակերեսով օժանդակ տարածքները, 1քմ և 1.4 խ.մ. պարիսպը և դրանց զբաղեցրած հողամասն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.10.2013թ. N10102013-01-1063 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Համաձայն <<Կենտրոն>> վարչական շրջանի հ.1 տեղամասի լիազոր ներկայացուցչի 23.10.2013թ. և բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 24.10.2013թ. տեղեկանքների՝ Գևորգ Հարությունի Մելքոնյանը 1973 թվականից հաշվառված բնակվում է վերը նշված հասցեում:

Բնակելի տունը նախկինում պատկանել է Գևորգ Մելքոնյանը հորը՝ Հարություն Աբրահամի Մելքոնյանին, որը խորհրդային միության տարիներին պետության հանդեպ չի կարողացել կատարել ֆինանսական պարտավորությունները, ինչի արդյունքում այն պետականացվել է և հետագայում ՀՀ գործող օրենսդրության համաձայն Երևան քաղաքը որպես համայնք ձևավորվելուց հետո փոխանցվել է Երևան համայնքին սեփականության իրավունքով:

Հարություն Մելքոնյանի մահից հետո Գևորգ Մելքոնյանը շարունակել է բնակվել քննարկվող տանը՝ բարեխիղճ կատարելով բոլոր անհրաժեշտ կոմունալ և սպասարկման վճարները:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 25.10.2013թ. հ.ԿԽ-2/63333 գրության համաձայն՝ Գևորգ Հարությունի Մելքոնյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Պրագայի փողոցի հ.15 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՊՐԱԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող Պրագայի փողոցի հ.15 հասցեում գտնվող գույքն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՊՐԱԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող Պրագայի փողոցի հ.15 հասցեում գտնվող գույքն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ